ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԵՂԵԳՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզի Եղեգնաձոր համայնք
Ք. Եղեգնաձոր, Շահումյան 1, +374 281 22020 yeghegnadzor.vayotsdzor@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

25 դեկտեմբերի 2020 թվականի N 280

ԳԻՆՈՒ ՀԱՄՏԵՍԻ ՍՐԱՀԻ ՍՊԱՍԱՐԿԱՄԱՆ ՀԱՄԱՐ ԱՌԱՆՁՆԱՑՎԱԾ ՀՈՂԱՏԱՐԱԾՔԻ ԱՌԱՆՁՆԱՑՎՈՂ ՀԱՏՎԱԾԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետի պահանջներով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն և Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի նոյեմբերի 11-ի թիվ 1730-Ն որոշումները.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1. Եղեգնաձոր համայնքին սեփականության իրավունքով պատկանող /անշարժ գույքի սեփականության իրավունքի գրանցման թիվ 20102020-10-0016 վկայական/ համայնք Եղեգնաձոր ք., Երևանյան խճուղի 1/3 հասցեում գտնվող գինու համտեսի սրահի սպասարկման համար առանձնացված հողատարածքի առանձնացվող 0.12447 հա մակերեսով հատվածին տրամադրել հետևյալ հասցեն՝ համայնք Եղեգնաձոր ք., Երևանյան խճուղի 1/3/1:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԴԱՎԻԹ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

2020թ. դեկտեմբերի 25
ք.Եղեգնաձոր

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԵՂԵԳՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզի Եղեգնաձոր համայնք
Ք. Եղեգնաձոր, Շահումյան 1, +374 281 22020 yeghegnadzor.vayotsdzor@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

23 դեկտեմբերի 2020 թվականի N 279

ԵՂԵԳՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՕՐԻՆԱԿԱՆ ԿԱՌՈՒՅՑԻ ՕՏԱՐՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետի դրույթներով, հիմք ընդունելով Եղեգնաձոր համայնքի ավագանու 13.03.2020թ.-ի թիվ 41-Ա որոշումը, Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի թիվ 912-Ն որոշման պահանջները և օրինական կառույցը գնելու վերաբերյալ Արմեն Աշոտի Խալաթյանի կողմից գնման համաձայնությունը.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1.Համայնքի ղեկավարի կողմից օրինական ճանաչված համայնք Եղեգնաձոր ք., Երևանյան խճուղի 1/3 հասցեում գտնվող համայնքային սեփականություն հանդիսացող 119.57 քմ մակերեսով գինու համտեսի սրահը և զբաղեցրած ու սպասարկման համար առանձնացված 0,14827 հա մակերեսով հողատարածքն ուղղակի վաճառքով վաճառել Արմեն Աշոտի Խալաթյանին շինության համար 1468890 ՀՀ դրամ և հողատարածքի համար 1841520 ՀՀ դրամ արժեքով:

2. Քաղաքացու հետ կնքել առուվաճառքի պայմանագիր:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում անձին որոշման մասին իրազեկելու պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԴԱՎԻԹ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

2020թ. դեկտեմբերի 23
ք.Եղեգնաձոր

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԵՂԵԳՆԱԶՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզի Եղեգնաձոր համայնք
Ք. Եղեգնաձոր, Շահումյան 1, +374 281 22020 yeghegnadzor.vayotsdzor@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

23 դեկտեմբերի 2020 թվականի N 278

ՀԱՇՄԱՆԴԱՄ ԶԻՆԾԱՌԱՅՈՂԻՆ ԲՆԱԿԱՐԱՆԱՅԻՆ ՀԱՇՎԱՌՄԱՆ ՎԵՐՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետի և Հայաստանի Հանրապետության կառավարության 2018 թվականի դեկտեմբերի 6-ի թիվ 1419-Ն որոշման դրույթներով և հաշվի առնելով, որ Հայկ Բենիամինի Սեխլիյանը ակտիվ մասնակցություն է ունեցել ապրիլյան պատերազմին և վիրավորվել (ինչի արդյունքում դարձել է 1-ին խմբի հաշմանդամ) ու վերջինիս կողմից 16.12.2020թ.-ին ներկայացված թիվ 431 դիմումը.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1. 1-ին խմբի զինհաշմանդամ Հայկ Բենիամինի Սեխլիյանին, հաշվառված ք. Եղեգնաձոր, Արսենյան շենք 9, բնակարան 37 հասցեում, վերցնել բնակարանային հաշվառման:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ **ԴԱՎԻԹ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ**

2020թ. դեկտեմբերի 23
ք.Եղեգնաձոր

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԵՂԵԳՆԱԶՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզի Եղեգնաձոր համայնք
Ք. Եղեգնաձոր, Շահումյան 1, +374 281 22020 yeghegnadzor.vayotsdzor@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

21 դեկտեմբերի 2020 թվականի N 277

ԲՆԱԿԵԼԻ ՏԱՆԸ ԵՎ ՏՆԱՄԵՐՁԻՆ ՀԱՍՑԵԻ ՓՈՓՈԽՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ և 24-րդ կետերի դրույթներով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 29.12.2005թ. թիվ 2387-Ն որոշումը և հաշվի առնելով ավագանու 27.12.2019թ-ի թիվ 98-Ն որոշումը.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1. Հանգուցյալ Գագիկ Հայկազի Վարդանյանին և Ջուլետա Հայկազի Վարդանյանին սեփականության իրավունքով պատկանող (անշարժ գույքի գրանցման սեփականության թիվ 2151704 վկայական) պատկանող բնակելի տան և տնամերձի հասցեն փոփոխել և տրամադրել հետևյալ հասցեն՝ Վայոց ձորի մարզ, համայնք Եղեգնաձոր ք., Չալաբյան փողոց տուն 15:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում անձին առձեռն հանձնելու պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԴԱՎԻԹ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

2020թ. դեկտեմբերի 21
ք.Եղեգնաձոր